# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հայկ և Նարեկ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/273 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Դպրոցական պայուսակ՝ Չինաստանի արտադրության: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 96 թերթանի՝ <ԱՐԻԿՈ-ԳՈՌ> ՓԲԸ, ՀՀ արտադրության կամ համարժեքը: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 48 թերթանի՝ ՏԵՏՐՈՊՌՈՄ ՍՊԸ, ՌԴ արտադրության: | 175 պայուսակ, որոնցից յուրաքանչյուրում պետք է դասավորված լինեն բոլոր 5 անուն գրենական ապրանքները՝ նշված քանակներին համապատասխան/ մատակարարի կողմից պետք է մատակարարվեն պատվիրատուին՝ որակյալ, նոր և չօգտագործված վիճակում: Մասնակցի կողմից անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն: Փաթեթի գինը իր մեջ ներառում է ապրանքների առաքումը վերը նշված հասցե: Փաթեթների բեռնաթափումը և մատակարարումը նշված հասցե պետք կատարվի մատակարարի կողմից: Տեսականին պետք է նախապես համաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման: ՊԱՅՈՒՍԱԿ - աշակերտական, առնվազն 30-35 սմ լայնությամբ և առնվազն 40-45 սմ բարձրությամբ, առնվազն 10-12 սմ խորությամբ, քաշը՝ առնվազն 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին գցելու համար: Պետք է պատրաստված լինի ամուր գործվածքից՝ պոլիէսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, էկոլոգիապես մաքուր, առավելագույնս ջրադիմացկուն: Պայուսակը պետք է լինի միագույն և ցանկալի է լինեն տարբեր գույների (սև, մոխրագույն, կապույտ, վարդագույն, մանուշակագույն, կանաչ) կամ հայատառ ձևավորումներով: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու |

| | | |
|---|---|---|
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 24թերթանի՝ ՏԵՏՐՈՊՌՈՄ ՍՊԸ, ՌԴ արտադրության: ՏԵՏՐ 12 թ | կայծակաճարմանդե գրպաններ: Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի երկու կամ երեք մասի: Պայուսակի կայծակաճարմանդները պետք է լինեն ամուր ու որակյալ, դրանց բռնակները երկաթյա: Պայուսակի հետնամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ: Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով: Պայուսակի վրա պետք է լինեն հատուկ լուսային ռեֆլեկտորային ծածկ կամ մասնիկներ: Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն ջրամանների գրպաններ: Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 96 ԹԵՐԹԱՆԻ- 4 ՀԱՏ /2 հատ տողանի և 2 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 96 թերթանի, հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 48 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 48 թերթանի հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց, լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 24 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 24 թերթանի հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց, լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ: ՏԵՏՐ 12 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, միագույն, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ, գծված լուսանցքներով: ԳՐԻՉ - 10 ՀԱՏ՝ բարձր որակի, գնդիկավոր, 0.5մմ հաստության, կապույտ միջուկով, ռետինե բռնակով, թափանցիկ պատյանով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Айк и Нарек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/273 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |